Երկրորդ ընթերցում
Նախագիծ

Կ-363²-14.10.2013-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԽԱՂԱՂ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ԱՆՎՏԱՆԳ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության 1999 թվականի փետրվարի 1-ի ՀՕ-285 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 18-րդ հոդվածը լրացնել նոր 1.1-րդ հոդվածով հետևյալ բովանդակությամբ.

«1.1. Սույն հոդվածի 1-ին մասի «բ-դ» կետերով սահմանված գործունեության տեսակներով կարող են զբաղվել իրավաբանական անձիք:»:

Հոդված 2.Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Խաղաղ նպատակներով ատոմային էներգիայի անվտանգ օգտագործման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» և «Ավտոմոբիլային տրանսպորտով վտանգավոր բեռներ և չվնասազերծված տարաներ փոխադրելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ ստացված դիտողությունների և առաջարկությունների

Առարկության, առաջարկության հեղինակը	**Առարկության, առաջարկության բովանդակությունը**	**Եզրակացություն**	**Կատարված փոփոխությունները**
1. ՀՀ կառավարություն	1/ «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի /այսուհետ՝ նախագիծ/ 3-րդ հոդվածում «մասին» բառը փոխարինել «մասի» բառով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի պահանջները:	1.Ընդունվել է:	1. Կատարվել է համապատասխան փոփոխություն:
	2/ Նախագծի 4-րդ հոդվածում ճիշտ նշել կետերի հաջորդականությունը:	2.Ընդունվել է:	2. Կատարվել է համապատասխան փոփոխություն: